ՀՏԴ 82-9

Գրականագիտություն

Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի դոցենտ, բ. գ. թ.
էլ. հասցե՝ nare-luys@mail.ru

ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ Շ. ՇԱՀՆՈՒՐԻ «ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ» ՎԵՊՈՒՄ

Ինքնորոշումի տենդագին լարումների, ինքնաժխտումի ներքին բարդույթների, միջավայրի պարտադրած նոր չափանիշների, ուծացման ու ձուլման դեմ հոգևոր անդադրում մաքառումների ու նահանջի մասին է Շահնուրի վեպը, որ դարձավ գրական-գեղարվեստական մի ամբողջ շարժման դասական մեկնակետ: Ինքնության կերպափոխությունը Շահնուրը ներկայացնում է իբրև հետևանք մշակութային բախման այն շարժընթացի, որի հուժկու հորձանուտների մեջ անխուսափելի են դառնում այլասերումն ու ապամշակութայնացումը, ուծացումն ու ձուլումը: Ոգու տեսության իր դատողություններում Շահնուրը կողք կողքի է դնում ազգային և մարդկային բարոյաբանական անկումները: Ինքնատեսությամբ վեր հանելով ազգային ոգու տկարությունները՝ Շահնուրը միմիայն միտված է բուժելու դրանք, որովհետև պատմական պահը, նրա համոզմամբ, ավելի ճակատագրական է, ավելի աններող, անդիմադրելի: Շահնուրը վեպում առաջադրում է հայության ինքնության ոչ միայն երկատված, այլև եռատված հիմնախնդիրը. հայը դառնում է պոլսահայ, այնուհետև՝ ֆրանսահայ: Ահա այս երկատված ու եռատված ինքության հարցադրումներով Շահնուրը քննադատական հայացք է ուղղում անցյալին, նախնիների ոչնչատեսիլ քաղաքականությանը, թագավորների անիմաստասեր վարքին: Ազգային գոյության ճանապարհին միասնական գաղափարաբանության և ապագայատեսիլ ռազմավարության բացակայության խնդիրը Շահնուրի վեպում դառնում է բոլոր ողբերգությունների պատմաքաղաքական հիմքը:

Բանալի բառեր՝ գաղթ, հայրենիք, ծննդավայր, ինքնություն, երկփեղկում, եռատվածություն, նահանջ, ընտանիք, կրոն, լեզու, հիշողություն, օտարացում, ձուլում:

Н. Ованисян

ПРОБЛЕМЫ КУЛЬТУРНОГО КОНФЛИКТА И ПОТЕРЯ ИДЕНТИЧНОСТИ В РОМАНЕ ШАХНУРА «ОТСТУПЛЕНИЕ БЕЗ ПЕСНИ»

Роман Шахнура, ставший классической отправной точкой целого литературно-художественного движения, рассказывает о лихорадочном напряжении самоопределения, внутренних комплексах самоотречения, новых стандартах, навязанных окружающей средой, борьбе против ассимиляции.

Шахнур представляет трансформацию идентичности как след движения культурного конфликта, в сильных вихрях которого неизбежны извращение, декультуризация и ассимиляция. В своих суждениях о теории духа Шахноур ставит рядом национально-человеческие моральные упадки. Выявляя с оптимизмом слабости национального духа, Шахнур стремится только их вылечить, потому что, по его мнению, исторический момент более фатален, непростительнее, неотразим.В романе Шахнур поднимает не только дихотомическую, но и тройную проблему армянской идентичности . Армянин становится стамбульским армянином, затем армянином французского происхождения. Задавая вопросы о двойной и тройной идентичности, Шахнур критически смотрит на прошлое, на невидимую политику своих предков, бессмысленное поведение королей. Проблема отсутствия единой идеологии и будущей стратегии на пути к национальному существованию становится исторической и политической основой всех трагедий в романе Шахнура.

Ключевые слова: миграция, родина, место рождения, идентичность, дихотомия, троица, отступление, семья, религия, язык, память, отчуждение, ассимиляция.

N. Hovhannisyan

PROBLEMS OF CULTURAL CONFLICT AND LOSS OF IDENTITY IN THE NOVEL OF SHAKHNUR «RETREAT WITHOUT SONG»

Shakhnur's novel, which has become the classic starting point of an entire literary and artistic movement, is about the feverish tension of self-determination, internal complexes of self-denial, new standards imposed by the environment and the struggle against assimilation.

Shakhnur presents the transformation of identity as a trace of the movement of cultural conflict in the strong vortices of which perversion, deculturalization and assimilation are inevitable. In his judgments about the theory of the spirit, Shahnour puts national and human moral declines side by side. Revealing the weaknesses of the national spiritwith optimism, Shakhnuronly tries to cure them, because, in his opinion, the historical moment is more fatal, unforgivableand

irresistible. In the novel, Shakhnur raises not only the dichotomous, but also the triple problem of Armenian identity. The Armenian becomes an Istanbul Armenian, then the Armenian of French origin. With these questions of dual and triple identity, Shakhnur takes a critical look at the past, the invisible policies of his ancestors, the senseless behavior of kings. The problem of the lack of a unified ideology and future strategy on the path to national existence becomes the historical and political basis of all the tragedies in Shahnur's novel.

Key words: migration, homeland, birthplace, identity, dichotomy, trinity, retreat, family, religion, language, memory, alienation, assimilation.

Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը ինքնորոշումի տենդագին լարումների, ինքնաժխտումի ներքին բարդույթների, օտար միջավայրի պարտադրած չափանիշների, ուծացման ու ձուլման դեմ հոգևոր անդադրում մաքառումների ու պարտության բացառիկ մատյան է, որ դարձավ գրական-գեղարվեստական մի ամբողջ շարժման՝ նահանջի գրական ուղղության դասական մեկնակետ: Արդեն իսկ վեպի բնաբանային-ավետարանական պատկերներով Շահնուրը գաղափարանշում էր մահվան և հարության ճանապարհի քրիստոնեական խորհուրդը՝ Քրիստոսի նախօրինակով իմաստավորելով հայության վերազարթնման իր տեսությունը: Բնաբանից նախանշվող հարության գաղափարը վեպում որոշակիանում է մի ամբողջ սերնդի հոգևոր ճանապարհով: Քրիստոնեական հարությունը չի ենթադրում հոգևոր կերպափոխություն, Քրիստոսը նույնն էր, ինչ որ հարությունից առաջ, մինչդեռ վերածնված սփյուռքահայը այլևս նախկին արևմտահայը չէ: Այս էր խնդիրը, և Շահնուրի վեպը նպատակաուղղված էր այդ խնդրի լուծմանը՝ ցույց տալու հայության ոգեղեն կերպարի դարձակետերը, ազգային ոգու վերակենդանացման իրապաշտական ուղիները:

Ինքնության կերպափոխությունը Շահնուրը ներկայացնում է իբրև հետևանք մշակութային բախման այն շարժընթացի, որի հուժկու հորձանուտների մեջ անխուսափելի են դառնում այլասերումն ու ապամշակութայնացումը, ուծացումն ու ձուլումը: «Ընդունող մշակույթը,-նկատում է Կ. Դալլաքյանը,- պարզապես նվաստացնում էր եկվորին, որի աչքին սեփականը երևում էր չնչին, անզոր ու անպաշտպան: Ծայր էր առնում ապամշակութացման շարժընթացը, որի պայմաններում, աստիճանաբար զրկվելով սեփական ենթահողից, հայության նոր սերնդի զգալի շերտեր ընդունում էին տիրող մշակույթը և կենցաղավարությունը ոչ այնքան դրանց բարձրագույն և ազնվացող դրսևորումների ձևով, որքան երևույթի մակերեսին սփռված հոռի բարքերի ու

հարաբերությունների տեսքով: Սկսվում էր ուծացումը, որը և Շահնուրը կոչեց «նահանջ»»[1]:

Վեպում Պոլսից Փարիզում հայտնված հայ «տղաքը» դառնում են ֆրանսիացի՝ կենցաղավարությամբ ու բնույթով, աղավաղվում է ազգային տիպարը, խորթանում են հայրենի հիշատակներն ու տոհմիկ հիշողությունները, մոռացվում՝ լեզուն ու ավանդույթները: Նոր միջավայրում օտարը աստիճանաբար դառնում է յուրային, յուրայինը՝ օտար: Ահա Պետրոսի՝ հետզհետե Պիերի վերածվելու հոգեբանական մի պատկեր. «Նախապես բոզանոցի մը նմանցուցած էր իրենց խանութը, գայթակղած ու զարհուրած՝ կիներու այդ արտասովոր համարձակութենեն, լպրշութենեն, ներկեն, հագուստներեն: Իրեն խորթ թվեցավ փարիզուհիներու մոտ ամոթխածության այդ պակասը, բայց հետո սկսավ կամաց-կամաց վարժվիլ, և առաջին օրերու այն հետաքրքրությունը, որով կհետևեր հագուստներու և ներքնաշապիկներու անկումին, նվազեցավ... Փարիզը անոր վրա ալ դրավ իր արտաքին վայելչության դրոշմը, ու տարիները անցան, այդ կիներուն պես մերկ, անսեր»[2]: Ինչքան էլ իմացական մակարդակում Պիերը վերապրում է նահանջի ողբերգությունը, կամքով չի կարողանում դիմագրավել հոսանքին, չի զատվում միջավայրից: Ներքին բանավեճերը մնում են չլուծված, ներքին ինքնաքննությունները՝ անիրագործված. «Աքսորի հիմնական տուեալը պառակտումն է,- նկատում է Գ. Շահինյանը: -Աքսորականը կը տարուբերի իր նախնական եւ փոխառեալ ինքնութիւններուն միջեւ, իր անցեալին եւ ներկային, ձգտումին ու համակերպումին, զգացումներուն եւ տրամաբանութեան միջեւ»[3] :

Պիերի և նրա պոլսահայ ընկերների նահանջը վեպում առաջադրում է նաև մի ուրիշ՝ մարդկային խնդիր. հայ երիտասարդները դառնում են ֆրանսիացի ոչ թե բարոյական բարձր դրսևորումներով, այլ հոռի բարքերով: Նենե՞թ, թե՞ Լիզ ընտրության խնդիրը Պիերի ճանապարհին նաև բարոյականության ու անբարոյականության ընտրություն էր, և Պիերն առանց երկմտանքի ընտրում է Նենեթին՝ միակցելով ազգային ու մարդկային բարոյաբանական անկումները:Հայկականի ու ֆրանսիականի, բարոյականի ու անբարոյականի բախման հանգուցակետերում նկատելի է դառնում Պիերի և նրա ընկերների երկփեղկվածության խնդիրը, մտահայեցողության ու կենցաղավարության դիմադարձությունը. «Երկփեղկումը,- շարունակում է Գ. Շահինյանը,- կը կատարուի վերէն վար. գէշ ուղղութիւն շահնուրեան պատկերաշխարհին մէջ,

---

[1] ***Գ. Դալլաքյան***, *««Նահանջի գրականություն» հասկացության հարցի շուրջ», «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 2, Ե., 2000, էջ 12:*

[2] ***Շ. Շահնուր***, *Նահանջը առանց երգի, Ե., 2013, էջ 40-41:Այսուհետ այս գրքից մեջբերումները կհղվեն տեքստում՝ նշելով էջահամարը:*

[3] ***Գ. Շահինյան***, *Շահան Շահնուր: Աքսոր եւ արուեստ, Անթիլիաս, 1985, Կաթողիկոսարան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ տպ., էջ 39:*

ուր կը համապատասխանէ ան ընկճուած հոգեվիճակի»[1]: Կրքերի ալեկոծ ծովում խորտակվող հոգիներ են Շահնուրի հերոսները, որոնք ինչքան էլ մտքով պայքարում են այլասերումի հորձանքի դեմ, կամքով տեղի են տալիս: «Ամբողջ տնաքանդ ժողովուրդ մը թափված էր Փարիզի մայթերուն վրա հանկարծ,-գրում է Ե.Ազատյանը,- և այդ լույս քաղաքի շռայլներուն տակ կը ճանչնար իր խոշտանգված էությունը և իր մերկությամբ կը հակադրվեր հզոր մշակույթի մը. . . Մշակութային մակարդակներու բախումե ավելի մշակույթների որակի, բնութագրի բուռն բախում մըն էր, որ հանկարծ կը պարտադրվեր հայուն»[2]:

Շահնուրի նահանջող հերոսների դեպքում երկու ազգային ինքնության մշակութային որակների բախումը հանգուցալուծվում է հայկականի պարտությամբ: Ազգային բնութագրից նահանջն ու ձուլումը օտար ինքնությանը դառնում են նաև սոցիալական լինելության նախահանգամանք պոլսահայ երիտասարդների համար. «Ժամանակը զանոնք բաժնեց իրարմե: Աղետին առաջին ամիսները անսահման սերով ու գորովով իրարու սեղմված, իրարու կապված էին Փարիզի մայթերը նետված երիտասարդները, մեծ մասամբ տակավին մանուկ: Ծննդավայրե, ընտանիքե, ապագայե խլված հայ տղաքը այդ օրերուն մեկզմեկու կառչեցան ուղեկորույս, մինչ որ ատեն անցավ. . . Դժվարին կենսաշահությունը, կյանքի պահանջքները, մանավանդ սա եռուզեռ կյանքը փչեցին այդ տկար խումբին վրա, ու ցրվեցին. փետուրներ թռան: Մարիանն իր անդիմադրելի հմայքով մոտեցավ անոնցմե յուրաքանչյուրին և քաշելով տարավ հոն, տարավ հոս: Հոն թե հոս, հաղթանակը միշտ նույնը մնաց. միշտ նույն Նենեթը. Մանոններու, Նինոններու, Նանաներու թոռնուհին: Ոմանք ամուսնացան, շատերը ապրեցան բարեկամուհիներով, պարպվեցավ հայոց եկեղեցին, մեկնող նամակներուն թիվը նվազեցավ, և, անշուշտ, հեռուն մայրեր լացին» (130):

Սոցիալական խնդիրներով հանդերձ՝ սիրո զգացմունքն է Շահնուրի վեպում դառնում ինքնության նահանջի գլխավոր գործոն: Պիեր-Նենեթ խորապես մարդկային սիրո ողբերգականության մեջ Շահնուրը դնում է նախևառաջ ազգային խնդիր. Պետրոսը Պիեր է դառնում Նենեթի հետ ունեցած հարաբերությունների արդյունքում: Այդ սերը, ազգային ինքնության ուրացումից բացի, Պիերին պատճառում է տառապանքի և, նվաստացման բազմաթիվ պահեր, և, այնուամենայնիվ, հաղթում է: Պիերը ներում է Նենեթի անբարո անցյալի բոլոր դրսևորումները, ներում է արևելցու սիրով և քրիստոնյա հոգեբանությամբ: Շահնուրը Պետրոս-Պիերի ինքնամաքառումների հոգեբանական պատկերներում հասնում է բացառիկ նրբության, բացահայտում սիրո հոգևոր տրամադրությունների ներքին հակասականությունը, սիրո

---

[1] *Նույն տեղում, էջ 40:*

[2] ***Ե. Ազատյան**, Գրական գեղարուեստական սեւեռումներ, Լա Վեռն, 1988, էջ 108:*

հաղթանակից ու ազգային ինքնության պարտությունից ծնված հոգեբանական դրաման։

Պետրոսի շարունակական հոգևոր ինքնամաքառումները դարձնում են նրան հոգեբանորեն երկփեղկված կերպար, որի մեջ պայքարում են իմացական անհատն ու ֆիզիկական անձը, որն ինչքան էլ հոգով ուզում է բարձրանալ միջավայրի հոսանքից, մարմնով գամված է այդ միջավայրին։ Ինքնակեղեքման պահերը երբեմն հասնում են ինքնաժխտումի. Պիերն ատում է իրեն, որ չի կարողանում ազատագրվել Նենեթից, որ Նենեթի տեսքով այլասերումը սպառնում է իրեն, որ մարմինների ձուլումը տանում է հոգիների ձուլման։ Նենեթի հանդեպ ունեցած անդիմադրելի զգացմունքն աննկատ է դարձնում ֆրանսուհի փոքրիկ Լիզի հայտնությունը, որի բարոյական կերպարն ու անձնուրաց սերը Պետրոսին թերևս կարող էին ետ պահել անկումների ճանապարհից, բայց նա ճակատագրականորեն սիրում է միայն Նենեթին, չնայած հոգեկան ընդվզման պահերին սթափության ներքին ճիգեր է գործադրում, փորձում Նենեթի կերպարի ճանաչողությամբ հասնել հոգեկան խզման ու անտարբերության։ Նենեթի անբարո արարքների, որ նա իր մերկ լուսանկարներով մասնակցել է Լեսքյուռի բիզնեսին և նրա սիրուհին է, որ պատահական կապեր է ունեցել ու լքել երեխային, որ շարունակում է կապված մնալ Լեսքյուռի հետ և այլն, գիտակցական բարձր մակարդակի հոգեբանական պահերը ևս անհետևանք են մնում ետդարձի առումով։ Պետրոսի իմացականությունը նրան չի դարձնում գաղափարի հերոս, նրան պակասում է կամքի ուժը։

Նահանջի ճանապարհն ուղեկցվում է հոգեբանական մի շարք անկումներով։ Նախ՝ Պիերը կորցնում է ծնողների հետ հոգեկան կապը, մոր ուղարկած նամակը բացում է ուշացած, երբ պատահաբար նշմարում է սեղանի վրա։ Նահանջի գիտակցական մակարդակն ու ընկճումի հոգեբանական վայրկյանը Շահնուրը չի դարձնում ինքնության փրկության ելք։ «Եվ հակառակ անոր, որ հեկեկանքը առաջին բառերեն իսկ կուրծքը ուռեցուց. . .» (119), Պիերը անգամ մինչև վերջ չի ընթերցում նամակը։ Հայրենի տան հիշատակների վերարթնացումի կանչն անարձագանք է մնում։ Հայրենական հիշողությունները այլևս խորթ են հերոսի համար, քաղցր հուզումներ չի պարգևում նրան նաև ծննդավայրից ուղարկված «չեվիրմեի անուշը», իսկ մոր կարած բաղնիքի քիսայում, որով Պիերը պիտի ինքնամաքրվեր հոգևոր ապականությունից ու այլասիրությունից, ամփոփվում է Նենեթի խարտյաշ մազերի մի փունջ։ Այդպես իմաստազրկվում են հայրենի մասունքները՝ դառնալով առօրեական իրեր։ Խորհրդանշական այս պատկերը անդրադարձնում է Պետրոսի ինքնության կորստի անշրջանցելի իրողությունը, որից հետո հնչում է նահանջի ահազանգը։ «Եսի այս երկու մասերը,- նկատում է Գ. Շահինյանը,- մատնանշուած են բացայայտօրէն. մէկ կէսը արիւնի կողմն է, այսինքն՝ նախնական ինքնութեանը,

միւսը՝ փոխառեալ ինքնութեանը: Երկուքն ալ թաղուած են խաւարին մէջ… Նախնական ինքնութեան խաւարը թանձր է. անո՛ր համար, թերեւս, որ մութ ճակատագիր մը կը յատկանշէ եւ կը կապուի խորութեան եւ հնութեան գաղափարի մը: Երկրորդ ինքնութեան խաւարը թեթեւ է, աւելի նօսր, որովհետեւ, հաւանօրէն, զերծ է դժբախտութեան բեռէն» [1]:

Թվում է՝ Նենեթի հանդեպ ունեցած Պիերի զգացմունքի մեջ իշխում են մարմնական կիրքը, ֆիզիկական կապվածությունը, արտաքին հմայքը, բայց ոչ միայն. Շահնուրը Պիեր-Նենեթ հարաբերությունների մեջ ընդգծում է և՛ մարմինը, և՛ հոգին: Պիերի զգացմունքը չի վերափոխվում, երբ Նենեթը հաշմանդամ է, չունի նախկին արտաքին վայելչությունը: Ավտովթարի հետևանքով Նենեթի թևը կտրել են,այտի վրա «լայն ու խորունկ պատռվածք մը կար, որ կիջներ մինչև վիզին» (177), այլևս նախկին հմայքն ու ազդեցությունը չունի, «բարեկամները» մերժել են նրան, և Պիերի սերը Շահնուրը դարձնում է խորտակվող հոգու հոգեբանական հենարան:

Վեպում Շահնուրը հոգեբանորեն նախապատրաստում է Պիերի քրիստոնյա ներման ու Նենեթին վերստին ընդունելու հոգեբանական պահը: Նենեթի հեռանալուց հետո Պիերը որոնում է ինքնավերագտնման ուղիներ, փորձում գտնել գործունեության դաշտ, առօրյա «պզտիկություններեն» վեր ուղի՝ մոռանալու հոգու ցավն ու ինքնությունը կեղեքող սիրո հիշողությունը: Բայց ինքավերագտնումի բոլոր ճանապարհները մտովի վերափակվում են նրա դեմ: Պետրոսը հրաժարվում է ազգային գործին նվիրվելու ճանապարհից՝ անխուսափելի համարելով ձուլումը, գտնելով, որ «դարման չկա ատոր» (167), իրեն չի վերագտնում նաև կուսակցական գործունեության մեջ, և այս հանգամանքը Շահնուրը հիմնավորում է օբյեկտիվ պատճառներով՝ նկատելով, որ «Իր վիճակը ունեցող երիտասարդ մը շատ ավելի սիրով ու կամեցողությամբ կնետվի անծանոթին մեջ, քան ծանոթ ուղին: Շատ ավելի հրճվանքով կերթա նույնիսկ երբեմն իր խառնվածքին, իր արյունին հակոտնյա գործունեության մը, որ նոր է, քան թե ճանապարհի մը, որուն կրցեր է ծանոթանալ գիտակցության գալեն ի վեր, որուն վրա շատ անգամ քայլ առ քայլ հետևեր է ուրիշներու հառաջխաղացումին, և ուր կխորհի, թե ավելի տիղմ կա, քան ուրիշ բան» (168):

Ազգային ճանապարհի խարիսխ չեն դառնում նաև կրոնն ու գրականությունը, որովհետև Պիերը նախընտրում է կյանքը, քան կյանքի հանդեպ հայտնված բոլոր մտքերը: Պիերի ինքնավերագտնումի դեգերումները չեն հասցնում նրան ինքնափրկության ափ, իսկ մտային պատճառաբանությունները բացահայտում են ընդամենը իդեալին նվիրվելու անվճռականությունը. «Վերասլաց շարժումով մըն է որ պէտք է ստեղծուի եսի միութիւնը՝ հարկադրաբար վերէն վար բաժնող շարժումին,- գտնում է Գ. Շահինյանը:- Միութիւնը մարդու վերին վայրերուն մէջ կրնայ իրագործիլ եւ

[1] ***Գ. Շահինյան****, Շահան Շահնուր: Աքսոր եւ արուեստ, էջ 41:*

յարատեւ ճիգ կը պահանջէ: Ճիգ, որուն արդիւնքը կասկածելի է, քանի բանաստեղծը կ՝ ըսէ թէ ուր եւ ինչպէս պէտք է տեղի ունենայ գործողութիւնը, բայց չի յայտնէր անոր ելքը: Միւս կողմէ, շեշտը կը դնէ կրկնակի կործանումին վրայ, փոխանակ՝ միացեալ ու նոր եսի մը կառուցումին» [1]: Կենտրոնական հերոսի այս վարքագիծը Շահնուրին վերագրելով՝ նահանջականների ընդդիմախոսները քննադատում էին նրան իդեալ չունենալու համար, իսկ Վ. Շուշանյանը որակեց Շահնուրին «Մարդ մը, որ Արարատ չունի իր հոգւոյն խորը»:

Այսպես՝ Պիերի դատողությունների միջոցով Շահնուրը թերագնահատում է կուսակցությունների, կրոնի ու ազգային գրականության դերը նահանջի հիմնախնդրում: Ազգային արժեքներրի վերագնահատության այս միտումը ավելի է ընդգծվում վեպի գաղափարական հերոսի՝ Սուրենի դատողությունների միջոցով:

Փարիզյան միջավայրից հեռացումը՝ որպես հորձանքից մեկուսանալու եղանակ, վերստին ինքնափրկություն չի դառնում և՛ ազգային, և՛ մարդկային առումով, բայց Շահնուրի շեշտադրումներն այստեղ ավելի շատ մարդկային համատեքստում են: Փարիզից հեռու էլ Նենեթի անցյալը պիտի հետապնդի Պիերին, շրջապատի կողմից իր անբարո անցյալին ուղղված ակնարկները պիտի խոցեն նաև վերափոխված Նենեթին, թեև Նենեթի հոգեկան անկումային վիճակը Շահնուրը առավելապես հիմնավորում է ինքնավստահության կորուստով և փոխադարձ սիրո կասկածամտությամբ: Ինչ-որ չափով թերևս հարցական է դառնում Պիերի պահվածքը, երբ հոգեբանորեն չի հակազդում Նենեթի հոգեվիճակին՝ թողնելով, որ նա ինքնուրույն վերագտնի նախկին դյուրակեցությունը: Նենեթին սիրելով հանդերձ, Պիերն ընթացք է տալիս ֆրանսուհի Գաբիի գայթակղության փորձերին, չի փորձում տարհամոզել Նենեթին: Պիեր-Գաբի հարաբերությունների միջոցով Շահնուրը մի կողմից վերստուգում է Պիերի զգացմունքը Նենեթի հանդեպ, մյուս կողմից՝ հաստատում Պիերի հոգևոր շրջադարձը փարիզյան նախկին միջավայրից: Գաբին հրաժեշտից առաջ Պիերին խնդրում է լուսանկարել իրեն. Գաբին ընդունել է ճիշտ այն դիրքը՝ ամբողջությամբ մերկ, ինչպես Նենեթը առաջին անգամ, ու Պիերը մերժում է ցանկահարույց ակնարկը. « -Կաղաչեմ, օրիո՛րդ, հագվեցեք, և անմիջապես: Ասիկա իմ մասնագիտությունս չէ բնավ»(197): Իսկ ֆիզիկապես ու հոգեպես վիրավոր Նենեթն այդ վիճակում անգամ շարունակում է կտրել Պիերի հիշողության թելերն իր անցյալի հետ, պատռում է նրան հասցեագրված նամակը, որովհետև «Ամեն անգամուն արտաքին պատճառներ կուգան կոր մեր հանգիստը խռովել» (192), և որովհետև Պիերն էր նաև այդպես կամեցել. «Իմ հոգսերը ինծի կբավեն» (191):

---

[1] *Նույն տեղում, էջ 41:*

Պիեր-Նենեթ սիրո պատմության ավարտը Նենեթի ինքնասպանությունն է և Պետրոսի նահանջի վերջին սահմանագիծը, որից այն կողմ ինքնության կորուստն է:

Նենեթի հոգեկան անկումներն ավելի են խորանում Պիերի՝ Փարիզ արձակուրդ մեկնելու հետ կապված: Հիվանդագին լարված հոգեվիճակների մեջ Պիերի սիրուն անվերջ կասկածող Նենեթը որոշում է հեռանալ՝ նրա երջանկությունը չխորտակելու համար: Նենեթի հրաժեշտի նամակը՝ սիրո և ինքնազոհության դրամատիկ խոստովանությամբ, հոգեբանական ինքնակեղեքման ու ինքնաքննության է դատապարտում Պիերին: Շահնուրը վերստին սիրո վարդապետության մեջ Պիերին հասցնում է քրիստոնեական ինքնամոռացման: Պիերի հոգևոր դարձի աստվածը Նենեթն է, որին ուղղված աղոթքը «Նարեկի»՝ ի խորոց սրտի սրբագրված խոսքն է. «Ընկա՛լ քաղցրությամբ, Նենեթդ իմ հզոր, զդառնացողիս զաղաչանս. մատի՛ր գթությամբ առ պատկառյալս դիմոք. փարատյա՛ ամենապարգև զամոթական տխրությանս: Տյառնագրյա՛ քո անվամբը զլուսանցուց երդ հարկիս, պարփակյա՛ քո ձեռամբը զառաստաղ տաճարիս. զծագրյաքո արյամբդ զմուտ սեմոց սենեկիս...» (216):

Վերադարձին Պիերը Նենեթին գտնում է մահամերձ: Սիրո մեջ դժբախտ զգացող կինը հույս ուներ, որ որդին՝ Բիբին, կներեր իրեն, դեռ մտածում էր, որ կարելի էր որդուն նվիրվելով խաղաղություն գտնել, բայց Բիբիի հոր վերաբերմունքը խորտակում է նրա կյանքի վերջին հենարանը, վերջնականապես կործանում հոգեբանորեն: Նենեթը ինքնասպանություն է գործում նախկին սիրեցյալի բարոյական հարվածից: Հանգամանքների անկախատեսելի բացահայտումից ցնցված՝ հոգեկան շփոթի մեջ Պիերը լսում է Նենեթի վերջին, կցկտուր թախանձանքը. «Պիերո՛, ազատե զիս, ազատե զիս... այս անգամ, հավատա...հիմա բժիշկը ըսավ, հավատա, ես...իրապես հղի...» (220):

Նենեթի մահը ևս Պիերի համար դարձակետ չի դառնում, կործանվում է ինքնության վերագտնման վերջին հույսը: Պիերը ջանում է հիշողության խորքից արտաբերել «Հայր մեր»-ի հայերենը, բայց չի կարողանում. «-Չեմ հիշեր կոր, Կոստան, մեղքցիր ինձի, ես իմ «Հայր մերս» չեմ հիշեր կոր...»: Կոստանը հուշում է ֆրանսերենը, և նա կրկնում է:

Այսպես, Շահնուրը ցույց է տալիս, որ Պետրոսի երկփեղկվածության և ինքնության նահանջի խնդիրը Նենեթի հետ ունեցած պատճառական կապն է, և ճշգրիտ է գրաքննադատ Գ. Շահինյանի այն դիտարկումը, որ «Պետրոսը ներքին հարցերով տարուող անձն է, մինչ Փիէռը՝ Ժաննի եւ ուրիշ օտար կիներու սիրականը... Յատկանշական է որ Շահնուր ալ Փիէռ կը կոչէ իր հերոսը, ամէն անգամ որ կը խօսի Ժաննի հետ անոր կապի մասին կամ կը նկարագրէ երկուքի սիրաբանութիւնը: Հերոսի մենութեան մասին խօսելու ատէն միայն, կամ հայրենակիցներու հետ ունեցած անոր յարաբերութեան, կը վերադառնայ

հայկական անունին» [1]: Ինքնության կորստի ազգային դրամային համընթաց Շահնուրը ներկայացնում է նաև սիրո կորստի համամարդկային դրաման՝ Նենեթի ինքնասպանության պահը հասունացնելով հոգեբանական տրամադրությունների հետևողական զարգացմամբ:

Պիերի և Սուրենի դատողությունների միջոցով Շահնուրը վեպում մեկնաբանում է ազգային հիմնախնդիրների պատմահոգեբանական նախադրյալները: Փաստորեն, կարելի է ասել, Պիերն ու Սուրենը Շահնուրի ներքին ես-երն են, իմացական ու գաղափարական կերպավորումները, ներքին վերաքննության դրսևորումները, ներքին բանավեճերը ազգային պատմաքաղաքական ճանապարհի հետ: Այս առումով Շահնուրի խորհրդածությունները մերթ առնչակցվում են Չարենցի «անանցյալ անցյալ» պատմափիլիսոփայության, մերթ՝ Մահարու ողբերգաերգիծական պատմահայեցողության հետ:

Մահարու «Այրվող այգեստաններ» վեպի նման Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը ևս արտասովոր գաղափարների տեսանկյունից դարձավ բուռն քննադատության թիրախ՝ հոգեբանական անհաշտություն առաջ բերելով երիտասարդ գրողի և գրական հանրության միջև, որի արդյունքում Շահնուրը հեռացավ հայ գրականությունից՝ այդուհետ հանդես գալով ֆրանսագիր գրականությամբ. «Որքան ալ տարօրինակ թվի ազգի մը տկարության պատճառները բացատրելու այս եղանակս,- գրում է Շահնուրը,- պետք չէ ուրանալ հոն ծածկված ճշմարտությունը: Նարեկացին սկզբնապատճառ նկատվի թե ոչ, իրողություն է, որ շատ մը բաներ կուգան լիովին կարդարացնեն իմ հախուռն մտածումս, որ իր ազգասերի տառապանքին մեջ կուզե անպայման մեկը նետել ամբաստանյալի աթոռին վրա» (155):

Շահնուրի ծայրահեղական դատողությունները Նարեկացու վերաբերյալ քրիստոնեության անդիմադիր ոգու ժխտումին միտված, ազգային կրավորական հոգեբանությունը բեկելուն ուղղված հիմնագաղափարներ են, որոնք դառնում են նահանջի գրական շարժման սկզբունքային ուղղվածություններից: Շահնուրի ծայրահեղական մտայնությունները հոգեբանորեն պայմանավորված են ազգային ողբերգության ուժեղ վերապրումներով և ազգային կորուստների խոր գիտակցումով. «Հայերը գիրք մը ունին, անոնց ամենագեշ, զզվելի,ամենասխալ, վատառողջ և ամենեն ավելի անբարոյական գիրքն է ան Նարեկը: Կամբաստանեմ զայն իբրև ամենամեծ թշնամին հայության, կամբաստանեմ այն թշվառականը, որ անոր տողերը թքավ... Հայերը զայն ընդունեցին, յուրացուցին, ընդգրկեցին: Ոչ մեկ սերունդ չխորհեցավ զայն ջնջել, որովհետև անոր լեզվական և բանաստեղծական ինչ-ինչ հատկություններեն խաբվելով ծածկված թույնը չնշմարեց: Ընդհակառակը, փոխանցեցին որդիե որդի, արյունե արյուն, ու ան եկավ մինչև մեզ... Ահա թե ինչու պարտվածներ ենք:

[1] *Նույն տեղում, էջ 96-97:*

Պարտվածներ ենք, որովհետև այն վանականին հաշմանդամ հոգիին պես արհամարհեցինք և անգիտացանք գոյությունը մեր եսին, մեր ուժին, կամքին, անհատականության. - չկռվեցանք, չխածինք, չմաքառեցանք: Քրիստոնեական վարդապետության անոր սխալ ու թերի մեկնությունը ընդունելով եղանք անմտորեն կրավորական, համակերպվող, աղերսարկու, անգիտակից. . .» (154-155):

Ազգային գոյության անկումների ճանապարհին Շահնուրը ընդգծում է հավաքական նպատակի և գործնական ռազմավարության բացակայության հիմնախնդիրը: Ճշմարտության բացահայտումը, որքան էլ այն դժվարընդունելի լինի, դառնում է Շահնուրի վեպի սկզբունքներից առանցքայինը: Շահնուրի ժխտողական հայեցակետերը, սակայն, միանշանակ չեն տարածվում ազգային պատմության ամբողջ ճանապարհի վրա: Ըստ Շահնուրի՝ պատմության ընթացքում մենք ունեցել ենք նաև փոքրաթիվ բացառություններ, բայց նարեկյան ոգին, ընդհանուր առմամբ, տիրական է եղել ազգային կյանքում:

Շահնուրի հոռետեսությունը հավասարապես տարածվում է նաև ներկա սերունդների վրա, որոնք, ըստ նրա, նախնիների նման անզաղափար են, անկիրք,անուժ. «Հավատքը չունի այն. հավատքը՝ կրքին կարմիր մոլեգնությամբը գրված. հավատքը, որ մեծ հոգիներ կկերտե. . . Այս հայը բան մը իր իտեալը չըներ և չի պայքարիր անոր համար. . . Խելացի, ուշիմ և գործունյա ցեղի մը զավակ ըլլալուն հակառակ այդ հատկությունները ի սպաս կդնե միայն իր կաշիին շահերուն: Հավաքականության հանդեպ պահած իր անտարբերությունը թանձր ու անթափանց կեղևի մը պես կուգա իր հոգին կչեզոքացնե, կբթացնե» (156):

«Խելացի, ուշիմ և գործունյա ցեղին» ինքնըստինքյան դիմադարձելով քրիստոնյա ազգի հոգևոր ու մարմնական տկարությունները՝ Շահնուրը հարում է 20-րդ դարասկզբին արևմտահայ գրական կյանքում սկզբնավորված հեթանոսական գրական շարժման գաղափարաբանությանը:Շարունակելով ժամանակակից սերնդի ոգու տեսական քննությունները՝ Շահնուրը գրում է, թե «ամբողջ հայությունը հիմնովին սարսող դեպքերե վերջ երկու գիծով միայն կտարբերի նախորդ սերունդներեն: Ավելի քիչ կը հավատա անկախության և նվազ կատե թուրքը: Նվազ կատե, որովհետև կճանչնա անոր առաջադիմութունը». . .(156):

Շահնուրը քննադատում է ներկա հայ սերնդի և՛ ազգային, և՛ բարոյական ըմբռնումները, և այդ քննադատությունը բխում է ազգային տեսլականի հարցականներից, մարտահրավերներին դիմակայելու ճիշտ ուղեգծերի սահմանման անհրաժեշտությունից: Բոլոր իմաստություններն ու վարդապետությունները յուրացրած այդ սերունդը թյուր ըմբռնում ունի նաև հայրենիքի հանդեպ. «Գիտե, թե հայրենիքը ներկա օրերու միջազգայնական գաղափարներուն առջև գեշ արգելք մըն է, իսկ իր հայրենիքը,- նկատում է Շահնուրը,- գորդյան հանգույց մը անլուծելի» (157):

Ոգու տեսության իր դատողություններում Շահնուրը կողք կողքի է դնում ազգային և մարդկային հոգևոր արժեքները. մեկի անկումը ենթադրում է նաև մյուսի անկում: Ներկա սերնդի աշխարհայեցողության մեջ հարաբերական են բարու և չարի, գեղեցիկի և տգեղի, բարոյականի և անբարոյականի ըմբռնումները: Սերը հոգեբանորեն ընկալվում է փորձանք, կինը՝ դրամ, դրամը՝ ամեն ինչ: Օտարամոլությունը, ազգային արժեքների հանդեպ թերահավատությունը, եսակենտրոնությունը, ըստ Շահնուրի, ժամանակակից սերնդի հոգեբանության տիրական հատկություններն են: Ինքնատեսությամբ վեր հանելով ազգային ոգու տկարությունները՝ Շահնուրը միմիայն միտված է բուժելու դրանք, որովհետև պատմական պահը, նրա համոզմամբ, ավելի ճակատագրական է, ավելի «աններող», «ահեղ», «անդիմադրելի»: Շահնուրի համոզմամբ՝ ինքնության կորուստի աղետը ավելի զորեղ է, քան կռիվը կամ ճակատամարտը, որոնցից «ազգ մը դուրս կուգա պարտված կամ հաղթական, սակայն երկու պարագային ալ դուրս կուգա: Բայց նահանջը հոգիներու, գլխի պտույտ տվող զառիթափին վրա սա նահանջը կջնջե, կձուլե, կանհետացնե ամեն բան. . .

Կնահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսա, կնահանջեն բարք, ըմբռնում բարոյական, սեր: Կնահանջե լեզուն, կնահանջե լեզուն, կնահանջե լեզուն: Եվ մենք դեռ կնահանջենք բանիվ և գործով, կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ» (158):

Շահնուրի ողբերգական տագնապը ոչ միայն հայության ներկայի, այլև առավելապես ապագայի համար է, որովհետև ուրացող, սպիտակ ջարդին զոհ դարձող սերունդն իր հետ սպանում է նաև ապագա հայ սերնդին. «Իսկ մե՛նք, կվճարենք իբրև վերջին փրկագին այն, որ պիտի գա, իբրև վերջին փրկագին մանուկներ, որոնք կրնային մեծնալ, ապագայի սերունդներ, որոնք մեզմե վերջ պիտի գային: Որովհետև այն, որ պիտի գա, պիտի ըլլա օտար, բանիվ և գործով, կամա և ակամա, գիտութամբ և անգիտությամբ, մեղա՛, մեղա՛ Արարատին» (158):

Շահնուրի այս գաղափարները մարմնավորվում են վիպական գործողությունների ընթացքում: Այսպես, Հրաչի որդին կրում է ֆրանսիացի պապի անունը՝ Ռընե, ֆրանսուհի մոր մշակութային դաստիարակությունը: Հրաչը չի գիտակցում ֆրանսուհի Սյուզանի բարոյատիպը. «Հավատա՛, որ այս անգամվանը բոնիշ չէ, ընդհակառակն, անուշիկ, զմայլելի, պատվական պուպրիկ մը. և շատ շնորհքով ընտանիքի աղջիկ: Զավակն ալ ես ուզեցի, որ ունենանք, որպեսզի իր ծնողքը մեր ամուսնությանը հավանի: Հավատա՛, Պետրոս, բնավ ան քու կարծած թեթևսոլիկներեդ չէ, շատ դժվարմատչելի. ամիսներով ետևեն եմ վազել, որպեսզի զինքը համոզեմ: Բայց հիմա ա՛լ երջանի՛կ եմ, երջանի՛կ»(199): Քիչ հետո Պետրոսը պիտի սառը ցնցում ապրի՝ ճանաչելով Սյուզանին՝ «քանատացիին ստերլիններուն» նախկին սիրուհուն, «որ նույնիսկ

անգամ մը իր հրավերն ալ չէր մերժած ու եկած իր սենյակ, թող տալով, որ Պետրոս ուզածին պես. . .» (201)։ Հրաչի խառնվածքին հակոտնյա, հաշվենկատ, սառնարյուն, խորամանկ Սյուզանը սովորական կեցվածքով ու ինքնավստահությամբ պիտի դիմավորի Պետրոսին և ժպտալով կանխի ճշմարտության բացահայտումը. «-Վստահ էի, որ բարեկամդ զիս պիտի ճանչնա. քանի մը անգամներ իր պանդոկին սանդուղներուն վրա հանդիպած ենք իրարու. . .» (200)։ Եվ Հրաչի ու Սյուզանի պսակադրությանը ներկա Պետրոսը, իմացական մակարդակում զգալով ուծացման դրաման, իր սրտահույզ ճառը նվիրում է «դժբախտ անձերու»՝ Հրաչի ծնողներին. «Ես այս գավաթը կխմեմ կենացը անոնց, զորս մոռցեր եք այս պահուս. անոնց, որոնց համար մեծագույն օր մը պիտի ըլլար այս օրը։ Ես կխմեմ յազմաջի Քրիսին, Աղավնի հանըմին կենացը։

Շատերը ցած ձայնով իրարու հարցուցին. «ո՞վ են, ո՞վ են»։

-Հայրիկս. . .մայրիկս. . .-կակազեց Հրաչը մեկեն հեկեկալով, մինչ Սյուզան թաշկինակը կերկարեր անոր արցունքներեն անգամ առնելու համար» (202-203)։

Այսպես՝ Սյուզանի թաշկինակը խնամքով սրբում է ողբերգության հետքերը, ջնջում հիշողության վերականգնման վերջին նշույլները։

Շահնուրը վեպում առաջադրում է հայության ինքնության ոչ միայն երկատված, այլև եռատված հիմնախնդիրը. հայը դառնում է պոլսահայ, այնուհետև՝ ֆրանսահայ։ Շահնուրի վեպի հերոսները՝ պոլսահայ երիտասարդները, հայության եռատված ինքնության կերպարներ են. նրանք երբևէ չէին տեսել իրենց հայրենիքը՝ Հայաստանը։ Փարիզը Հայաստանին չի փոխարինում նրանց կյանքում, այլ՝ ընդամենը Պոլսին, ծննդավայրը նրանց համար սոսկ տարածք է, հայրենիքի հանդեպ հավաքական պատկերացում չունեն, ազգային արժեհամակարգն արդեն խարխլված է նրանց մեջ մինչև ֆրանսիացի դառնալը։ Ինքնությունների ու մշակույթների բախման հանգուցակետերում տեղի են ունենում կորուստներ, աստիճանաբար ուրանալով ինքնությունը, օտար մշակույթի հորձանքի մեջ ներառվելով՝ ֆրանսահայը դառնում ֆրանսիացի, և այսպես ամենուրեք։ Իսլամական երկրներում կրոնի տարբերությունը ներքուստ խթան է դառնում, որ հայությունը զգոն լինի սպիտակ ջարդի հանդեպ, մինչդեռ քրիստոնյա երկրներում գրեթե առանց դիմադրության կուլ է գնում ձուլման հոսանքին։

Ահա այս երկատված ու եռատված ինքության հարցադրումներով Շահնուրը քննադատական հայացք է ուղղում անցյալին, նախնիների ոչնչատեսիլ քաղաքականությանը, թագավորների անիմաստասեր վարքին։ Ազգային գոյության ճանապարհին միասնական գաղափարաբանության և ապագայատեսիլ ռազմավարության բացակայության խնդիրը Շահնուրի վեպում դառնում է բոլոր ողբերգությունների պատմաքաղաքական հիմքը. «Հավաքական ճիգին տեղ դրել ենք հայդուկներ- մեր բոլոր վանքերը ապացույց։

Աղիքներու ճիչին տեղ դրեր ենք արցունքներ-մեր բոլոր բանաստեղծները ապացույց...

Գաղափարականին տեղ դրեր ենք կաղապարներ- մեր բոլոր գրքերը ապացույց։ Պայքարին տեղ դրեր ենք կռվազանություն- մեր բոլոր կուսակցությունները ապացույց»(135)։

Շահնուրի գաղափարակիր հերոսը՝ Սուրենը, մատնացույց է անում ոչ միայն մեր քաղաքական պատմության բացթողումները, այլև հոգևոր կյանքի անկատարությունը։ Սուրենի դատողությունները երբեմն հասնում են ծայրահեղության, հոռետեսական մտահայեցողության, բայց դա ունի իր կենսահոգեբանական նախադրյալները։ Նահանջի ողբերգության հոգեբանական դրսևորումները Շահնուրի մեջ բևեռացված էին ծայրահեղ աստիճանի. «Խոցված առյուծի տառապանքը ապրեցավ այդ գրողը, իր գրիչը թաթախեց մեր ժողովրդին տառապանքին մեջ ու գրեց, գրեց անիծելով, բայց ոչ ուրանալով, ինչպես ոմանք հետևցուցին, գրեց՝ արյունելով իր և ուրիշներուն հոգին, մտածելով, թե այդ է ձևը տառապանքեն թմրած հոգիները արթնացնելու... - նկատում է գրաքննադատ Թ. Թորանյանը,- Շահնուր անդադար կմտածե իր ժողովուրդին մասին, գրողը ուր ալ կգտնվի, ինչ պատմություններու տակ ալ ըլլա, չի խզվիր իր ժողովուրդեն, իր ցավի մեջ ալ չի մոռանար իր ժողովուրդը»[1]։

Ազգային կյանքի հիմնախնդիրները, Շահնուրի համոզմամբ, նախևառաջ անկախ պետականություն չունենալու հետևանք են։ Ազգային գոյության հարցում Շահնուրը պատմականորեն կարևորում է պետականության, լեզվի, ուժեղ կրոնի, ամուր միաբանությամբ ստեղծված ընտանիքի երաշխիքները։ Պետականությունից ու սեփական հողից զուրկ սփյուռքահայությունը կարող է գոյատևել լեզվով, ազգային մշակույթով, «աստվածային կիրքով» միակցված հայեցի ընտանիքով։ Բայց նահանջում է լեզուն, նահանջում են բարքերը, խառնածին ամուսնությունները հարվածում են ազգային ինքնության պահպանման հիմնասյուներին. դրա համար է, որ Շահնուրն այնքան սուր է հնչեցնում տագնապի կոչնակները, հոգեբույժի պես վեր հանում ազգային հոգեբանության չսպիացած վերքերն ու շարունակվող խնդիրները՝ ինքնաճանաչողության հասնելու և իրական վիճակից վեր բարձրանալու ձգտումով.«Կը պատահի որ մերժողական կեցուածք որդեգրէ հայկական իրականութեան հանդէպ, բայց չի կրնար կտրուիլ անկէ» [2],- նկատում է Գ. Շահինյանը :

Հայ ստեղծագործ ու մտավոր ներուժի վերաբերյալ Շահնուրի գաղափարական հերոսի դատողությունները ուղղված են ազգային հավաքական մշակույթի գաղափարին և հեռու են հայկական մշակութային ժառանգության ժխտողական միտվածությունից, ինչպես հակված են քննադատներից ոմանք.

---

[1] *Թ. Թորանյան, Վերստին կարդալով Շահան Շահնուրը, 1971, Հալէպ, էջ 11, 52:*

[2] *Գ. Շահինյան, Շահան Շահնուր: Աքսոր եւ արուեստ, էջ 52:*

«Հայը ունի լավ նկարիչներ, բայց ոչ՛ նկարչություն. հայը ունի լավ դերասաններ, բայց ո՛չ թատերգություն. հոգնիլ չգիտցող ճամփորդներ՝ բնա՛վ նավապետ. հայը ունի զմայլելի բանաստեղծներ, բայց ո՛չ գրականություն. աստվածներ՝ ո՛չ դիցաբանություն. խնկելի հեղափոխականներ, բայց ոչ հեղափոխություն. հայը ունեցած է ազատություններ, երբեք՝ անկախություն» (133)։

Սփյուռքահայության ազգային ինքնության պահպանման անհուսալիությունը Շահնուրի գաղափարական հերոսին ինչ-որ տեղ հասցնում է ինքնաժխտումի չափազանց սուր դատողությունների, որոնք բացահայտում են նրա հոգևոր պատմության տրամադրությունները՝ պայմանավորված նախնառաջ սպիտակ ջարդի սպառնալիքով. «Հայը ամուլ է, անծին, անպտուղ։ Հայը դատարկ է, փուճ, ունայն, սնոտի» (133)։

Շահնուրի հերոսի այս մռայլ դատողությունները տարածվում են ոչ միայն ներկա,այլև անցյալ սերունդների վրա։ Հայության հոգեփոխության խնդիրը, ըստ Շահնուրի,փոխանցվել է սերնդեսերունդ՝ այդ համատեքստում խնդիրը դիտարկելով որպեսազգային ներկա իրավիճակի նախահանգամանք. «Որքան որ մտածումս ետև տանիմ, հայերը կտեսնեմ միշտ այնպես, ինչպես որ են այսօր։ Պզտիկ, գաճաճ, տխեղծ։ Յուրաքանչյուրը անդիմադրելի պաշտմունքը ունի ի՛ր կաշիին, ի՛ր մորթիին։ Եսամոլ, անձնասեր, անմիաբան, նպարավաճառ...» (136)։ Այսպիսի խորհրդածություններով ինքնակեղեքվող հերոսը բնական է, թերահավատ է ազգային ինքնության պահպանման ճանապարհի հանդեպ։ Այս է ողբերգությունը, և այդ ողբերգության կանխագիտակցումն է Շահնուրին մղում հոգեբանական սուր տագնապների, արմատական, անհաշտ մտայնությունների. «Պիտի այլասերինք ամենքս ալ, պիտի կորսվինք բոլորս ալ» (134)։ Ազգային հարցադրումների ու խորհրդածությունների բնույթով «Նահանջը առանց երգի» վեպը, հիրավի, ինչպես Շահնուրն է կոչել, «Պատկերազարդ հայոց պատմություն» է։

Ազգային ինքնության այլասերման շարժընթացում Շահնուրը առանձնացնում է նաև ընտանիքի խնդիրը։ Ավանդական ընտանիքի պատկերացումների սրբագրումից մինչև խառնածին ամուսնությամբ հայ ընտանիքի փլուզում և ապագա հայ սերնդի օտարացում. ահա հիմնական խնդիրները, որոնց առանցքում Շահնուրը տեսնում է նահանջի գլխավոր գործոնը։ Կորուստներից հետո հոգեբանորեն հավատը կորցրած, հայրենազրկված սփյուռքահայության ազգային ինքնության պահպանման գործում հայ ընտանիքը պիտի լինի խարիսխ, միչդեռ կործանման վտանգը սպառնում է նրան՝ հարցականի տակ դնելով ապագայի բոլոր հույսերը. «Ուրիշներու պես մենք ալ մեր կրոնքը ու հավատը թաղեցինք պատերազմի ընթացքին։ Անկախության մը հույսը հալեցավ, կորսվեցավ հանձնված բերդաքաղաքին հետ։ Ու հիմա կհարվածի մեզ վեր բռնող մեծագույն և հիմնական սյունը, ընտանիքը։ Հայ աղջիկը մնաց հեռուն, մնաց լքված, ան, որ

անհրաժեշտ էր մեր արյունին, հակառակ իր տգեղության, իր չոր հպարտության և անմիջապես մայրանալու ու ծերանալու հակամիտության» (134)։

Հայ ընտանիքի փլուզման հարցում Շահնուրը տեսնում է նաև ներքին դրդապատճառներ. «Աստվածային կիրքին տեղ դրեր ենք հարսներ-մեր բոլոր արարիչները ապացույց»(135)։ Սիրո մշակութային և կենցաղավարական հակադրությամբ Շահնուրը հիմնավորում է հայ երիտասարդների հրապուրանքը օտար գեղեցկուհիների հանդեպ. «Այժմ հայուհին իր հիշողությանը կներկայանար միայն երկու հաստ սրունքով ու քիչ մը բեղով» (134)։

Այնուամենայնիվ, գաղափարական հերոս լինելով հանդերձ, Սուրենը ևս համալրում է նահանջողների շարքերը՝ իր առաջին գիրքը հրատարակելով ֆրանսերեն, և իմացական մակարդակում նահանջի ազգային դրաման վերապրող Պիերը հանդիմանում է նրան՝ հիշեցնելով.«- Գրածներդ ոչ մեկ հայու կրնան խոսիլ, որքան ատեն, որ անոնց մեջ «կարոտ» բառը չկա...Այո, մի՛ խնդար, որովհետև միայն այդ չէ, որ թերի է. դուն արդեն գիտես, բայց թող որ հիշեցնեմ, թե ֆրանսերենը գոյություն չունի նաև «մա՛յր» բառին, «հա՛յ» բառին, «աքսոր» բառին...Ֆրանսերենը չկա՛ մե՛ր «զաղթականին», մե՛ր «որբերին»...» (205)։

Շահնուրի վեպում բացառիկ հերոսը, որ չի նահանջում, Լոխումն է։ Լոխումի կերպարի մասին դատելիս Պիերը խոստովանում է, որ «ցավեր կան, որոնց չենք ուզեր անդրադառնալ. կփախչինք անոնցմե, որովհետև իրապես մեծ են»(165)։ Պետրոսը շատ խորն է ընկալում Լոխումի դրաման, Լոխումի պատմությունն ասես Պետրոսի իմացական ես-ի հաղթանակի հեռապատկերն է։ Լոխումը անհույս սիրահարված է ֆրանսուհի մարմնավաճառի, բայց չի նահանջում, հակառակ Պետրոսի, հիվանդագին լարումով պայքարում է ուծացումի և ձուլումի դեմ. «-Ի՞նչ, ի՞նչ,- կգոռար ան,- նորեն ֆրանսերե՞ն թերթ, նորեն ֆրանսիակա՞ն թատրոն. ատոնց հայերենը չկա՞։ Չպիտի՞ ըլլա, որ դուք սանկ մեյ մը ցնցվիք, գիտակցիք մեր վիճակին. չպիտի՞ ըլլա, որ կռվիք, մաքառիք ձուլումին ու այլասերումին դեմ... Մենք ալ հայրենիք մը ունինք. պետք է պատրաստ կենանք հոն երթալու։ Զբաղեցեք անով, պետք է, որ ճահիճները չորցնենք, պետք է, որ ջրանցքները բանանք...» (163)։

Ինչպե՞ս է լուծվում Լոխումի դիմադրության խնդիրը համընդհանուր ապամշակութայնացման մեջ։ Նա չի կորցնում ինքնությունը, բայց հոգեբանորեն զոհ է դառնում մաքառման ճանապարհին։Հայրենիք մեկնելու համար Լոխումը դիմում է ռուսական դեսպանատուն՝ անցագիր ստանալու. մերժում են։ Դիմում է թուրքական դեսպանատուն՝ ծննդավայր վերադառնալու, դարձյալ արգելում են։ Ազգային տագնապներից հյուծված՝ Լոխումը տրվում է թմրամոլության, հայտնվում կյանքի հատակում։ Հոգեբանորեն և ֆիզիկապես կործանվում է անհատը դիմադրության ճանապարհին, բայց չի ձուլվում միջավայրին, չի

խառնվում հոսանքին: Շահնուրը չի արդարացնում նաև Լոխումի կործանումը. «Ի՞նչ կարժենք մենք,- ասում է Պետրոսը,- երբ մեր ցավը մեղմելու համար այսպիսի միջոցներու պիտի դիմենք. ու՞ր կմնա մեր կորովը, մեր կամքը, մեր ուսումն ու դաստիարակությունը, երբ չպիտի կարենանք տառապագին օրերու դեմ դնել: Պետք է մաքառինք և երբեք չարհամարհենք ցավը,որովհետև ան է որ մեզ պիտի կռե, ճկե ու կազմե»(172): Թմրամոլության միջավայրում իրեն ամոքելու եկած Պետրոսը, Լոխումի անկումը տեսնելով, սթափվում է՝ հրաժարվելով այդ միջավայրից: Լոխումն ի վերջո մեռնում է՝ զառանցանքի մեջ կրկնելով՝ «չորցնենք ճահիճները, ջրանցքներ բանանք» (174):

Ի պատասխան վեպի դեմ սկսված քննադատական գրոհի՝ Շահնուրը գրում է, որ «մեծագույն փափագս այն է, որ այդ գիրքը հիննա և կորսնցնե գոյության ամեն իրավունք: Հեղինակի մը համար, որ ընկերային ախտ մը մատնանիշ ըրած է, ոչինչ այնքան բերկրալի է, որքան իր գրքին անհետացումը, իբրև ուղղակի հետևանք ախտին բժշկումին»:

Այս հայեցակետում է ամփոփվում նաև «Նահանջը առանց երգի» վեպի գրապատմական ու գաղափարական հսկայական արժեքն ու նշանակությունը:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը: